



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 փետրվարի 2023թ. N 67-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 62-րդ և 64-րդ կետերի ու հիմք ընդունելով Արման Ղարիբի Ալոյանի և Մհեր Նվերի Զառահյանի դիմումը՝ **որոշում եմ**.

1. Արման Ղարիբի Ալոյանին և Մհեր Նվերի Զառահյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Հրաչիկ Հարոյան պողոտա 27/77 անշարժ գույքի (կադաստրային ծածկագիր՝ 07-003-0037-0050) հասցեն համարել չեղյալ և վերահասցեավորել.

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Զորավար Անդրանիկի փողոց 11:

2. Դիմել Կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ վերահասցեավորման գրանցում կատարելու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

13.02.2023



X *[Signature]*

VERIFIED OCSP 13.02.2023 15:39:16 GMT+4

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Signed by: BALASYAN HAKOB 3009590148

Հ. ԲԱԼԱՍՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 փետրվարի 2023թ. N 68-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 3-ի N 1129-Ն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2022 թվականի հոկտեմբերի 31-ի վճիռը և Վաղինակ Ասատրյանի դիմումը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Զորավար Անդրանիկի փողոց 107 հասցեի (կադաստրային ծածկագիր 07-003-0011-0100, չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 20226JBAQC) 0.05 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքի նպատակային նշանակությունը փոփոխել բնակավայրերի նպատակային նշանակության, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:



Recoverable Signature

X

[Handwritten Signature]

VERIFIED OCSP 14.02.2023 12:54:13 GMT+4

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Signed by: BALASYAN HAKOB 3009590148

Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2023թ. փետրվարի 14
ք. Բյուրեղավան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 փետրվարի 2023թ. N 69-Ա

ԿԱՐԻՆԵ, ԳԱՅԱՆԵ ԵՎ ՆԱՐԻՆԵ ԱՎԱՆԵՍՅԱՆՆԵՐԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ
ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-11-րդ և 22.1-րդ կետերի, հաշվի առնելով «ՀԱԲՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2023 թվականի հունվարի 23-ի եզրակացությունն այն մասին, որ ինքնակամ շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, ինքնակամ կառուցված շինությունները կառուցված չեն ու չեն գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, շինությունները կառուցվել է 1990 -1993 թվականներին, հիմք ընդունելով չափագրման հատակագծերը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի լրացուցիչ վկայագրերը և Նարինե Ավանեսյանի դիմումը՝ **որոշում եմ.**

1.Քաղաքացիներ Կարինե, Գայանե և Նարինե Ռուդիկի Ավանեսյաններին ժառանգության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Դարանի թաղամաս 1-ին փողոց 10 հասցեի (կադաստրային ծածկագիր՝ 07-051-0134-0017, չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2022YUXKF7) 0.05 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում ինքնակամ կառուցված 145.3 քմ

արտաքին (101.98 քմ ներքին) մակերեսով այգետնակը, 22.57 քմ արտաքին (19.73 քմ ներքին) մակերեսով օժանդակ շինությունը, 15.36 քմ ծածկը և 5.53 քմ պարիսպը ճանաչել օրինական:

2. Հաշվի առնելով, որ ինքնական շինությունները կառուցվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, ինքնական կառուցված շինության համար օրինականացման վճար չի գանձվում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:



Recoverable Signature

X

Handwritten signature

VERIFIED OCSP 14.02.2023 12:58:37 GMT+4

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Signed by: BALASYAN HAKOB, 3009590148

Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2023թ. փետրվարի 14

ք. Բյուրեղավան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 փետրվարի 2023թ. N 70-Ա

**ԱՐՄԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ
ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱԶԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-13-րդ կետերի, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 62-րդ և 64-րդ կետերի, հաշվի առնելով «ՀԱԲՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2023 թվականի հունվարի 20-ի եզրակացությունն այն մասին, որ ինքնակամ շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, ինքնակամ կառուցված շինությունները կառուցված չեն ու չեն գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, շինությունները կառուցվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը և հիմք ընդունելով չափագրման հատակագծերն ու Արմեն Աղասինի Ավետիսյանի դիմումը՝ **որոշում եմ.**

1. Քաղաքացի Արմեն Աղասինի Ավետիսյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ քաղաք Բյուրեղավան շարք 1 թիվ 30 անշարժ գույքի հասցեն համարել չեղյալ և վերահասցեավորել՝

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Սարալանջ թաղամասի 1-ին փողոց 31:

2. Քաղաքացի Արմեն Աղասինի Ավետիսյանի սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Սարալանջ թաղամասի 1-ին փողոց 31 հասցեի (կադաստրային ծածկագիր՝ 07-051-0040- , չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 20233JPXFP) 0.09 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում ինքնակամ կառուցված 467.41 քմ արտաքին (382.74 քմ ներքին) մակերեսով բնակելի տունը, 9.26 քմ արտաքին (7.24 քմ ներքին) մակերեսով օժանդակ շինությունը, 17,48 քմ մակերեսով հարթակ/աստիճանները, 4.63 քմ մակերեսով բաց պատշգամբը, 31.09 քմ մակերեսով ծածկերը, 2.84 քմ մակերեսով հենապատը և 19.02 քմ մակերեսով պարիսպը ճանաչել օրինական:

3. Արմեն Աղասինի Ավետիսյանին՝ համայնքապետարանի 900105202213 հաշվեհամարին վճարել 1086360 (մեկ միլիոն ութսունվեց հազար երեք հարյուր վաթսուն) դրամ՝ ինքնակամ կառուցված շինությունների օրինականացման վճար:

4. Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը 60-օրյա ժամկետում Բյուրեղավանի համայնքապետարանի համապատասխան հաշվեհամարին չվճարելու դեպքում սույն որոշումն համարել ուժը կորցրած:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:



Recoverable Signature

X

Handwritten signature

VERIFIED OCSP 14.02.2023 13:04:09 GMT+4

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Signed by: BALASYAN HAKOB 3009590148

Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2023թ. փետրվարի 14
ք. Բյուրեղավան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 փետրվարի 2023թ. N 71-Ա

**ԻՆՔՆԱԿԱՄ ԲԱՑՎԱԾ (ՁԵՎԱՓՈԽՎԱԾ) ԴՌՆԵՐՆ ՈՒ ՊԱՏՈՒՀԱՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ
ՃԱՆԱԶԵԼՈՒ ԵՎ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԱՌԱՆՁԱՑՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ
ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8.1-10-րդ և 18-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 33-րդ, 50-րդ ու 51-րդ կետերի և հիմք ընդունելով «Գիւս-Արտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից կազմված շինությունների բաժանման սխեման, «ՍԵԳՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Գարիկ Մանվելի Ծատրյանի դիմումը՝ **որոշում եմ.**

1. «ՍԵԳՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Օղակաձև փողոց 7 շենք 50 բնակարան հասցեում կատարված ներքին ձևափոխությունները, ինքնակամ բացված (ձևափոխված) թվով ութ պատուհանները և չորս դռները ճանաչել օրինական:

2. «ՍԵԳՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ համայնքապետարանի 900105202213 հաշվեհամարին վճարել 23 630 (քսաներեք հազար վեց հարյուր երեսուն) դրամ՝ ինքնակամ բացված (ձևափոխված) թվով ութ պատուհանները և չորս դռների օրինականացման վճար:

3. Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը 60-օրյա ժամկետում Բյուրեղավանի համայնքապետարանի համապատասխան հաշվեհամարին չվճարելու դեպքում սույն որոշումն համարել ուժը կորցրած:

4. Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Օղակաձև փողոց 7 շենք 50 հասցեի բնակարանի (վկայական N 17112022-07-0009) առանձնացվող շինություններին տրամադրել հասցեներ՝

1) 273.75 քմ մակերեսով առանձնացվող շինությանը՝

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Օղակաձև փողոց 7 շենք 50/1.

2) 67.0 քմ մակերեսով առանձնացվող շինությանը՝

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Օղակաձև փողոց 7 շենք 50/2.

3) 35.2 քմ մակերեսով առանձնացվող շինությանը՝

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Օղակաձև փողոց 7 շենք 50/3.

4) 5.8 քմ մակերեսով առանձնացվող շինությանը՝

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Օղակաձև փողոց 7 շենք 50/4.

5) 33.15 քմ մակերեսով առանձնացվող շինությանը՝

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Օղակաձև փողոց 7 շենք 50/5:

5. Դիմել Կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ հասցեների գրանցում կատարելու համար:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:



Recoverable Signature

X

Handwritten signature

VERIFIED OCSP 14.02.2023 17:18:04 GMT+4

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Signed by: BALASYAN HAKOB 3009590148

Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2023թ. փետրվարի 14
ք. Բյուրեղավան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 փետրվարի 2023թ. N 72-Ա

**ՆՎԱՐԴ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ
ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-12-րդ և 22.1-րդ կետերի, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ և 51-րդ կետերի ու հաշվի առնելով «ՀԱԲՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2023 թվականի հունվարի 09-ի եզրակացությունն այն մասին, որ ինքնակամ շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, ինքնակամ կառուցված շինությունները կառուցված չեն ու չեն գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, շինությունները կառուցված են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, հիմք ընդունելով այգեգործական հողամասի առուծախի պայմանագիրը, չափագրման հատակագծերն ու Նվարդ Սուրենի Ղուկասյանի դիմումը՝ **որոշում եմ.**

1. Կոտայքի մարզի Նոտնուս գյուղում գտնվող 6-րդ տեղամաս թիվ 34 անշարժ գույքին (կադաստրային ծածկագիր 07-051-0151-0018) տրամադրել հասցե՝

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նոտնուս Սևան թաղամասի 6-րդ փողոց 34:

2. Նվարդ Սուրենի Ղուկասյանին պատկանող Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նոտնուս Սևան թաղամասի 6-րդ փողոց 34 հասցեի (կադաստրային ծածկագիր՝ 07-051-0151-0018, չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2023JX5NDV) բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում ինքնակամ կառուցված 19.7 քմ արտաքին (15.4 քմ ներքին) մակերեսով լողավազանը, 18.2 քմ արտաքին (14.8 քմ ներքին) մակերեսով օժանդակ շինությունը և 2.4 քմ մակերեսով պարիսպը ճանաչել օրինական:

3. Հաշվի առնելով, որ ինքնակամ շինությունները կառուցվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, ինքնակամ կառուցված շինությունների օրինականացման համար վճար չի գանձվում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:



Recoverable Signature

X

VERIFIED OCSP 14.02.2023 17:53:15 GMT+4

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Signed by: BALASYAN HAKOB, 3009590148

Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2023թ. փետրվարի 14
ք. Բյուրեղավան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 փետրվարի 2023թ. N 73-Ա

ԱՆԺԵԼԱ ՎԱՆԵՍՅԱՆԻՆ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ
(ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ) ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման N 1 հավելվածով հաստատված կարգի 9-րդ կետի և հիմք ընդունելով Անժելա Յուրիի Վանեսյանի հայտը՝ **որոշում եմ**.

1. Անժելա Յուրիի Վանեսյանին տալ նախագծման թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք)՝ Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս 3-րդ փողոց 20 հասցեի բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.1019 հեկտար (կադաստրային ծածկագիր 07-051-0017-0011) հողամասում կցաշար առանձնատների, ամառային խոհանոցի, օժանդակ շինությունների, լողավազանի և պարսպի կառուցման աշխատանքների նախագծային փաստաթղթերի մշակման համար:

2. Անժելա Յուրիի Վանեսյանին՝

- 1) նախագիծը ներկայացնել համաձայնեցման.
- 2) կառուցման աշխատանքներն սկսել շինարարության թույլտվություն ստանալուց և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման N 5 հավելվածի N 2-5 ձևի տեղեկանքը շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն 3 օր առաջ Բյուրեղավանի համայնքապետարան ներկայացնելուց հետո:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Signed by: BALASYAN HAKOB 3009590148

Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2023թ. փետրվարի 15
ք. Բյուրեղավան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 փետրվարի 2023թ. N 74-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ և 51-րդ կետերի, հիմք ընդունելով «Հայաստանի ազգային արխիվ» պետական ոչ առևտրային կազմակերպության Արուսյանի տարածքային ներկայացուցչության տված 2022 թվականի դեկտեմբերի 28-ի N ԱԲ-3000 արխիվային տեղեկանքն ու Արմիդա Գրիշայի Սարգսյանի դիմումը՝ **որոշում եմ**.

1.Քաղաք Բյուրեղավան 4-րդ շարքի 1-ին անշարժ գույքին (ծածկագիր՝ 07-003-0130-0021-ից) տրամադրել հասցե.

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Սարալանջ - 2 թաղամաս 4-րդ փողոց 1:

2.Դիմել Կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ հասցեի գրանցում կատարելու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

16.02.2023

X

VERIFIED OCSF 16.02.2023 15:18:42 GMT+4

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Signed by: BALASYAN HAKOB 3009590148

Հ. ԲԱԼԱՍՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 փետրվարի 2023թ. N 75-Ա

ՄԻԱՎՈՐՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻՆ ՄԵԿ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետի, 33-րդ, 50-րդ և 51-րդ կետերի, հիմք ընդունելով Վաչագան Հրաչի Խնկոյանի և Արևիկ Սերգեյի Մինասյանի դիմումը՝ **որոշում եմ**.

1. Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Գարուն այգեգործական ընկերություն թիվ 217 և Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ Նուռնուսի այգետարածք թիվ 218 անշարժ գույքերի հասցեները համարել չեղյալ և միավորվող երկու անշարժ գույքերին տրամադրել մեկ հասցե.

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Գարուն թաղամաս 1-ին փողոց 217-218:

2. Դիմել Կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ հասցեի գրանցում կատարելու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

16.02.2023



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Signed by: BALASYAN HAKOB 3009590148

Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2023թ. փետրվարի 16
ք. Բյուրեղավան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 փետրվարի 2023թ. N 76-Ա

**ԱՆԴՐԱՆԻԿ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ
(ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ) ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման N 1 հավելվածով հաստատված կարգի 9-րդ կետի և հիմք ընդունելով Անդրանիկ Ռոբերտի Սարգսյանի հայտը՝ **որոշում եմ**.

1. Անդրանիկ Ռոբերտի Սարգսյանին տալ նախագծման թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք)՝ Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Զորավար Անդրանիկի փողոց 43/34 հասցեի բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 0.025 հեկտար (կադաստրային ծածկագիր 07-003-0020-0124) հողամասում ավտոտեխսպասարկման կետի կառուցման աշխատանքների նախագծային փաստաթղթերի մշակման համար:

2. Անդրանիկ Ռոբերտի Սարգսյանին՝

1) նախագիծը ներկայացնել համաձայնեցման.

2) կառուցման աշխատանքներն սկսել շինարարության թույլտվություն ստանալուց և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման N 5 հավելվածի N 2-5 ձևի տեղեկանքը շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն 3 օր առաջ Բյուրեղավանի համայնքապետարան ներկայացնելուց հետո:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

16.02.2023



VERIFIED OCSP 16.02.2023 15:42:30 GMT+4

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Signed by: BALASYAN HAKOB 3009590148

Հ. ԲԱԼԱՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 փետրվարի 2023թ. N 77-Ա

ՄԱՐԻՅԱ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ և 51-րդ կետերի, հիմք ընդունելով «Հայաստանի ազգային արխիվ» պետական ոչ առևտրային կազմակերպության Արխիվային տարածքային ներկայացուցչության տված 2021 թվականի նոյեմբերի 22-ի N ԱԲ-2277 արխիվային տեղեկանքը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի լրացուցիչ վկայագիրն ու Մարիյա Արմենակի Ղազարյանի դիմումը՝ **որոշում եմ**.

1. Արխիվային շրջանի Նոտնուս այգետարածքի թիվ 14 տեղամասի թիվ 28 անշարժ գույքին (ծածկագիր՝ 07-051-0143-0014) տրամադրել հասցե.

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նոտնուս Դարանի թաղամասի 8-րդ փողոց 30:

2. Դիմել Կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ հասցեի գրանցում կատարելու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

16.02.2023

X

VERIFIED OCSF 16.02.2023 15:52:01 GMT+4

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Signed by: BALASYAN HAKOB 3009590148

Հ. ԲԱԼԱՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 փետրվարի 2023թ. N 78-Ա

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 23-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված կարգի և հիմք ընդունելով «ՎՈԼԻՈՍ նախագծային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության դիմումը, գրությունն ու լիազորագիրը՝ **որոշում եմ.**

1. Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս 12-րդ փողոց 1-ին փակուղի 3 (միացման պատվեր N 87552111, 9219-ԷՄ, 0.4 կՎ) հասցեի Մնացական Գագիկի Գևորգյանին պատկանող անշարժ գույքի էլեկտրամատակարարման աշխատանքների կատարման (կառուցման) նպատակով «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը տալ շինարարության թույլտվություն՝ համաձայն հաստատված նախագծի:

2. «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը՝

1) համայնքապետարանի 900105202510 հաշվեհամարին վճարել 3000 (երեք հազար) դրամ՝ տեղական տուրք շինարարության թույլտվության համար.

2) շինարարությունն սկսել տեղական տուրքը վճարելուց և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման N 5 հավելվածի N 2-5 ձևի տեղեկանքը շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն 3 օր առաջ Բյուրեղավանի համայնքապետարան ներկայացնելուց հետո:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

16.02.2023



VERIFIED OCSP 16.02.2023 16:42:57 GMT+4

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Signed by: BALASYAN HAKOB 3009590148

Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2023թ. փետրվարի 16

ք. Բյուրեղական



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 փետրվարի 2023թ. N 79-Ա

ՆՈՐԱՅՐ ԿՈՒՅՈՒՄՉՅԱՆԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ
ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 23-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված կարգի, հիմք ընդունելով Նորայր Ռուբենի Կույումյանի դիմումը և լիցենզավորված ճարտարապետի կողմից գծված նախագծի առկայությունը՝ **որոշում եմ.**

1. Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Դարանի թաղամաս 6-րդ փողոց 9 (ծածկագիր՝ 07-051-0140-0036, սեփականության վկայական N 26052022-07-0094) հասցեի բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.052 հեկտար հողամասում այգետնակի վերակառուցման, վերնահարկի ավելացման և բացօթյա հարթակի կառուցման նպատակով Նորայր Ռուբենի Կույումյանին տալ շինարարության թույլտվություն՝ համաձայն հաստատված նախագծի:

2. Նորայր Ռուբենի Կույումյանին՝ համայնքապետարանի 900105202247 հաշվեհամարին վճարել 3000 (երեք հազար) դրամ՝ տեղական տուրք շինարարության թույլտվության համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

16.02.2023

X 

VERIFIED OCSP 16.02.2023 16:25:58 GMT+4

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

2023թ. փետրվարի 16
ք. Բյուրեղավան

Signed by: BALASYAN HAKOB 3009590148

Հ. ԲԱԼԱՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 փետրվարի 2023թ. N 80-Ա

ՆԱՐԵԿ ՄԽՈՅԱՆԻՆ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ (ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ) ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման N 1 հավելվածով հաստատված կարգի 9-րդ կետի և հիմք ընդունելով Նարեկ Վոլոդյայի Մխոյանի հայտը՝ **որոշում եմ.**

1. Նարեկ Վոլոդյայի Մխոյանին տալ նախագծման թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք)՝ Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց 8/64 հասցեի բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.1039 հեկտար (կադաստրային ծածկագիր 07-003-0029-0032) հողամասում մեկ հարկանի բնակելի տան կառուցման աշխատանքների նախագծային փաստաթղթերի մշակման համար:

2. Նարեկ Վոլոդյայի Մխոյանին՝

- 1) նախագիծը ներկայացնել համաձայնեցման.
- 2) վերակառուցման աշխատանքներն սկսել շինարարության թույլտվություն ստանալուց և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման N 5 հավելվածի N 2-5 ձևի տեղեկանքը շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն 3 օր առաջ Բյուրեղավանի համայնքապետարան ներկայացնելուց հետո:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

17.02.2023



X *[Signature]*

VERIFIED OCSP 17.02.2023 13:47:30 GMT+4

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ՝

Signed by: BALASYAN HAKOB 3009590148

Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2023թ. փետրվարի 17
ք. Բյուրեղավան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 փետրվարի 2023թ. N 81-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՅԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ և 51-րդ կետերի, հիմք ընդունելով Սերոբ Պողոսի Մովսիսյանի դիմումը՝ **որոշում եմ**.

1. Կոտայքի մարզ Նուռնուսի համայնք անշարժ գույքին (ծածկագիր՝ 07-051-0017-0012) տրամադրել հասցե.

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Գլխավոր փողոց 11:

2. Դիմել Կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ հասցեի գրանցում կատարելու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

17.02.2023



VERIFIED OCSP 17.02.2023 16:09:18 GMT+4

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Signed by: BALASYAN HAKOB 3009590148

Հ. ԲԱԼԱՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 փետրվարի 2023թ. N 82-Ա

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և հիմք ընդունելով Բյուրեղավան համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 14-ի N 15-Ն որոշմամբ հաստատված կարգը՝ **որոշում եմ**.

1. 2023 թվականի փետրվարի 21-ից մինչև մարտի 7-ը ներառյալ Բյուրեղավան համայնքում կազմակերպել հանրային քննարկումներ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2022 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվության վերաբերյալ:

2. Հանրային քննարկումները կատարվելու են Բյուրեղավանի համայնքապետարանի պաշտոնական համացանցային կայքի՝ byureghavan-kotayk.am, միջոցով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

21.02.2023



VERIFIED OCSP 21.02.2023 16:57:43 GMT+4

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Signed by: BALASYAN HAKOB 3009590148

Հ. ԲԱԼԱՍՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 փետրվարի 2023թ. N 83-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 31-Ի N 34-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի՝ **որոշում եմ.**

1. Բյուրեղավան համայնքի ղեկավարի 2018 թվականի հունվարի 31-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի աշխատակարգը հաստատելու մասին» N 10-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման նախաբանում ««Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի» բառերը փոխարինել ««Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի» բառերով.

2) որոշման հավելվածի 2-րդ կետի առաջին նախադասությունում «երկու» բառը փոխարինել «երեք» բառով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից

21.02.2023



VERIFIED OCSP 21.02.2023 17:07:44 GMT+4

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Signed by: BALASYAN HAKOB 3009590148

Հ. ԲԱԼԱՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 փետրվարի 2023թ. N 84-Ա

ԱՆԱՀԻՏ ԲԱՇՐԱԹՅԱՆԻՆ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ (ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ) ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման N 1 հավելվածով հաստատված կարգի 9-րդ կետի և հիմք ընդունելով Անահիտ Նապոլեոնի Բաշրայանի հայտը՝ **որոշում եմ.**

1. Անահիտ Նապոլեոնի Բաշրայանին տալ նախագծման թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք)՝ Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Հայրենադարձ թաղամաս 40 հասցեի բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.04 հեկտար (կադաստրային ծածկագիր 07-003-0052-0004) հողամասում պարսպի կառուցման աշխատանքների նախագծային փաստաթղթերի մշակման համար:

2. Անահիտ Նապոլեոնի Բաշրայանին՝

- 1) նախագիծը ներկայացնել համաձայնեցման.
- 2) կառուցման աշխատանքներն սկսել շինարարության թույլտվություն ստանալուց և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման N 5 հավելվածի N 2-5 ձևի տեղեկանքը շինարարական աշխատանքներն սկսելուց

առնվազն 3 օր առաջ Բյուրեղավանի համայնքապետարան ներկայացնելուց հետո:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

21.02.2023



Handwritten signature of Balasanyan Hakob

VERIFIED OCSP 21.02.2023 17:46:58 GMT+4

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Signed by: BALASYAN HAKOB 3009590148

Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2023թ. փետրվարի 21
ք. Բյուրեղավան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 փետրվարի 2023թ. N 85-Ա

ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ 47 ՇԵՆՔ ԹԻՎ 17 ԲՆԱԿԱՐԱՆԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 62-րդ և 64-րդ կետերի ու հիմք ընդունելով Նարինե Մնացականյանի դիմումը՝ **որոշում եմ.**

1. Նարինե Մնացականյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Բյուրեղավան 47 շենք թիվ 17 բնակարանի (վկայական 1415453, տրված՝ 2003 թվականի հուլիսի 17-ին) հասցեն համարել չեղյալ և վերահասցեավորել՝

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Սամվել Վարդանյան փողոց 47 շենք 17 բնակարան:

2. Դիմել Կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ վերահասցեավորման գրանցում կատարելու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

21.02.2023



VERIFIED OCSP 21.02.2023 17:50:07 GMT+4

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Signed by: BALASYAN HAKOB 3009590148

Հ. ԲԱԼԱՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ
(մարզը, համայնքը)

ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ
(ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱՂՐԱՆՔ)
N 2 15 ՓԵՏՐՎԱՐԻ 2023թ.

Օրյեկտ՝ Կցաշար առանձնատների, ամառային խոհանոցի, օժանդակ շինությունների, լողավազանի և պարսպի կառուցման նախագծային փաստաթղթերի մշակման համար:

(օրյեկտի անվանումը, կառուցում, վերակառուցում, ուժեղացում, վերականգնում, գործառնական նշանակության փոփոխություն)

«Աշխարանքային նախագիծ», (III կապեզորիա), միջինից բարձր ռիսկայնության աստիճան

(հակիրճ բնորոշումը, հզորությունը ռիսկայնության աստիճանը (կատեգորիան), նախագծման փուլերը և այլն)

Գտնվելու վայրը Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս 3-րդ փողոց 20 (ծածկագիր՝ 07-051-0017-0011) բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.1019 հա հողամաս

(մարզի, համայնքի, փողոցի անվանումները, շենքի համարը, հողամասի ծածկագիրը)

Կառուցապատող Անժելա Յուրիի Վանեսյան (Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Զորավար Անդրանիկի փողոց 42 շենք 15 բնակարան), հեռ. 095631126, 093723255

(կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը, բնակության վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)

Առաջադրանքի տրամադրման հիմքը սեփականության վկայական N 26092022-07-0021, կառուցապատման հայտ, Էսքիզային նախագիծ

կարգով հողամասի տրամադրման, անշարժ գույքի փոփոխման իրավունքը հաստատող անհրաժեշտ փաստաթղթերը)

Առաջադրանքի գործողության ժամկետը 12ամիս

(N 1 հավելվածի 32-րդ կետին համապատասխան)

ՆԱԽԱԳԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

(աստղանիշով () նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)*

1. Հողամասը գտնվում է Բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության
(հողամասի դիրքը քաղաքաշինական միջավայրում, դրա նպատակային և գործառնական նշանակությունը)

2. (*) Հողամասի չափերը 0.1019 հա
(հողամասի սահմանները՝ կոորդինատային նշահարմամբ, մակերեսը (հա))

3. Հողամասի առկա վիճակը Մեղմ ռելիեֆ, կցաշար առանձնատների, ամառային խոհանոցի, օժանդակ շինությունների, լողավազանի և պարսպի
(ռելիեֆի բնութագիրը, շենքերի (այդ թվում՝ քանդման ենթակա) առկայությունը (օգտագործումը, նշանակությունը, հարկայնությունը, շինարարական նյութերը և այլն), կանաչապատումը, բարեկարգումը և այլն)

4. (*) Տրանսպորտային պայմանները ներհամայնքային նշանակության ճանապարհներ
(ճանապարհների առկայությունը, երկաթուղային տրանսպորտի մոտեցումները և այլն)

5. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ
(ջրամատակարարման, կոյուղու, գազամատակարարման, տաք ջրի մատակարարման,

էլեկտրաստատկարարաս, էլեկտրոնային հաղորդակցության համակարգեր)

համաձայն հալարակագծերի (սխեմաներ)

(նախագծվող հողամասով կամ կից տարածքով անցնող ինժեներական ենթակառուցվածքները, այդ թվում՝ ստորգետնյա)

6. (*) Կից հողամասեր

Բնակելի շինություններ, բնակավայրերի նպատակային նշանակության հողամասեր, ներհամայնքային ճանապարհներ

(կից հողօգտագործումների անվանումը և դրանց սահմանները՝ համաձայն ներկայացված սխեմայի)

7. Բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների տարածքներ (պահպանական գոտիներ)

չկան

(հուշարձանի անվանումը, կարգավիճակը և այլն)

8. (*) Հատակագծային սահմանափակումներ

նախագիծը մշակել համաձայն տրված առաջադրանքի

(տեղանքում գործող արտադրական, պաշտպանվող օբյեկտների, ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքների և այլ օբյեկտների նկատմամբ սահմանափակումները, այդ թվում՝ սերվիտուտները)

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

(աստղանիշով () նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)*

9.

Ճարտարապետահատակագծային պահանջներ

ղեկավարվել ՀՀ գործող նորմերին համապատասխան ըստ միջավայրի պայամանների, հաշվի առնել միջավայրի քաղաքաշինական առանձնահատկությունները, հալարակագծային լուծումները ըստ պարզվիրաբուի առաջադրանքի, ըստ միասնական պահանջներ սահմանող ուղեցույցի, կառուցվող նախագծի վերաբերյալ

(ելնելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներից, առկա քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի դրույթներից կամ դրանց բացակայության դեպքում՝ կազմավորված (կազմավորվող) քաղաքաշինական միջավայրի պայամաններից, առաջարկություններ ձևակերպելու, տանիքների, արտաքին դռների, պատուհանների համամասնությունների և գունային լուծումների վերաբերյալ)

9.1. (*) օբյեկտի հեռավորությունը կարմիր գծից (մետր)

Պահպանել կառուցվող շինության հեռավորությունը կարմիր գծից

9.2. (*) հեռավորությունը հարևան հողակտորներից (օբյեկտներից) (մետր)

համաձայն կարգի

9.3. թույլատրելի բարձրությունը (մետր)

սահմանային հարկայնության բարձրությունը գերազանցող շենքերի և շինությունների նախագծման դեպքում՝ ՀՀՇՆ II-6.02-2006 «Սեյսմակայուն շինարարություն. Նախագծման նորմեր» շինարարական նորմերով սահմանված պահանջների ապահովում (հատուկ հաշվարկային մեթոդներ, սեյսմակայունության բարձրացման միջոցառումներ և այլն)

հողի մակերես 0.1019 հա, շինությունների առավելագույն բարձրությունը 7,5մ

9.4. կառուցապատման խտության գործակիցը (կառույցի (կառույցների) ընդհանուր մակերեսի հարաբերությունը հողամասի մակերեսին)

1/3

9.5. կառուցապատման տոկոսը (կառուցապատվող (անջրանցիկ) տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով (%)

38%

9.6. կանաչապատման տոկոսը (կանաչապատ տարածքի

62%

հարաբերությունը ռոդասասր
մակերեսին՝ տոկոսներով (%)

9.7. այլ պահանջներ

տարածքում տեղադրել ինֆորմացիոն վահանակ

10. Հողամասում գտնվող
շենքերի ու շինությունների
քանդման կամ տեղափոխման
(ապամոնտաժման) պայմանները
և աշխատանքների
հերթականությունը

11. Ստորգետնյա, կիսանկուղի և
առաջին հարկերի տարածքների
օգտագործման պայմանները

Համաձայն էսքիզային նախագծի

12. (*) Ինժեներական ցանցեր և
սարքավորումներ

Պահանջներ՝ գոյություն ունեցող և նախագծվող ենթակառուցվածքների ու
ցանցերի նկատմամբ համաձայնեցնել իրավասու կազմակերպությունների հետ

12.1. (*) ջրամատակարարում,
կոյուղի, տաք ջրի
մատակարարում

Կցվում է «ՎԵՈՒԻԱ ՋՈՒՐ» փակ բաժնեփիրական ընկերություն չկա
(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.2. (*)
էլեկտրամատակարարում

Կցվում է «ՀԷՑ» ՓԲԸ, «ԽՍՍ» տնօրինության «Նաիրի» էլեկտրական ցանցեր
(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.3. (*) գազամատակարարում

Կցվում է «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Աբովյանի ԳԳՄ
(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.4. (*) էլեկտրոնային
հաղորդակցության մալուխատար
կոյուղու (ներառյալ դիտահորը)
տեղադիրքը

Համաձայնեցնել իրավասու մարմինների հետ
(համաձայն N 1 հավելվածի 57-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված ելակետային
տվյալների)

12.5. թույլ հոսանքներ

Չկան

12.6. աղբահանություն

Կնքել համապատասխան պայմանագիր աղբահանություն կազմակերպող իրավասու
կազմակերպության հետ

13. Տարածքի ինժեներական
նախապատրաստում

համաձայն գործող կարգի և նախագծի
(ռելիեֆի կազմակերպման, ջրահեռացման, ինժեներական պաշտպանության միջոցառումները)

14. Բարեկարգում

ապահովել հարակից տարածքի մաքրությունը, կանաչապատումը, բարեկարգումը
(լանդշաֆտային պլանավորման վերաբերյալ պահանջները, կանաչապատում, ճարտարապետական փոքր
ծևեր, ցանկապատում, գովազդ և այլն)

15. Շինարարական նյութեր

Քար, երկաթ-բետոն, տուֆ, մետաղ, փայտ, ավազ և այլն՝ համաձայն նախագծի
(շինարարական նյութերի օգտագործման առաջարկությունները տանիքների, ճակատների լուծումների,
արտաքին դռների, պատուհանների վերաբերյալ)

16. Պաշտպանական կառույցներ շինարարության ընթացքում ստեղծել անհրաժեշտ պաշտպանական միջոցներ

(արտակարգ իրավիճակներում մարդկանց և օբյեկտների պաշտպանության միջոցառումները)

17. Հակահրդեհային պահանջներ ապահովել հակահրդեհային նորմատիվ պահանջները համաձայն գործող կարգի

(հակահրդեհային անվտանգության ապահովման միջոցառումները)

18. Հաշմանդամների և
բնակչության սակավաշարժ
խմբերի պաշտպանության
միջոցառումներ

Համաձայն գործող կարգի

19. Շրջակա սրճավայրի պահպանում

Հիրականացնել վտանգավոր միջոցառումներ, որը կլրացնի բացասական ազդեցությունը շրջակա միջավայրի վրա, ըստ գործող նորմերի
(շրջակա միջավայրը վտանգավոր ազդեցությունից բացառելու միջոցառումները)

20. Շինարարության կազմակերպում

ճանապարհի երթևեկելի մասում չստեղծել երթևեկությանը խոչնդոտ հանդիսացող պայմաններ
(առաջարկություններ շինարարության հետ կապված անբարենպաստ ազդեցության բացառման, քաղաքային տնտեսության և տրանսպորտի անխափան աշխատանքի ապահովման վերաբերյալ)

21. Առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը

12 (տասներկու) ամիս
(նշվում են առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը)

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

22. Նախագծային փաստաթղթերի փորձաքննությանը ներկայացվող պահանջներ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված կարգին համապատասխան
